

ՋՈՆ ՈՒՈՐԴԵՆԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՆԳ ՕՂԱԿՆԵՐԻ ԴԵԿՈՄՊՈԶԻԱՑՄԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ընդհանուր առմամբ ընդունված է, որ պատերազմը լայնածավալ մարտական գործողություններ են, որոնց մասնակցում են տանկային, հրետանային, հետևակային, ավիացիայի և այլ զորատեսակների ուժեր: Սակայն այս սխեման ներկայումս չի գործում: Դա, ամենայն հավանականությամբ, բնորոշ էր քսաներորդ դարի առաջին կեսին, երբ գերակշռում էր տոտալ պատերազմի գաղափարը, որը նախատեսված էր զանգվածային հարվածների համար՝ օգտագործելով ամենատարբեր տեսակի սարքավորումներ և ներխուժումներ թշնամու տարածք: Այժմ ռազմական գործողությունների վարման մոտեցումները փոխվել են (չնայած անհրաժեշտության դեպքում կարող են կիրառվել հին մեթոդները, նույնպես): Երկար ժամանակ, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում, ԱՄՆ–ը գրեթե բոլոր գործողություններում հավատարիմ մնաց երկու աշխատանքային սխեմաների՝ Ջոն Ուորդենի հինգ ռազմավարական օղակների տեսությանը և Բոյդի հանրահայտ օղակներին (https://www.datocms-assets.com/63284/1722103360-boyd-ooda_arm.pdf):

Իր աշխատությունում Ջ. Ուորդենն ընդգծում է օդատիեզերական ուժերի գերակայությունը, ինչպես նաև այն փաստը, որ ավիացիայի ամենաարդյունավետ և գործուն կիրառումը ռազմավարական մակարդակն է: Ջ. Ուորդենի ռազմավարական պատերազմի հայեցակարգը արդարացնում է թշնամու կենսական կենտրոնների ընտրությունը որպես հարձակման հիմնական նպատակակետ, ինչը թույլ է տալիս հասնել քաղաքականության մեջ ցանկալի փոփոխությունների: Ջ. Ուորդենն իր աշխատանքներում մշակում է «գլխատման» միջոցով հակառակորդին շարքից հանելու ռազմավարությունը և իր ուշադրությունը սևեռում է հակառակորդի «ծանրության կենտրոններին» օդային հարվածներ հասցնելուն: Աշխատանքի հիմնական միտքն այն է, որ ռազմաօդային ուժերը եզակի կարողություն ունեն հասնելու պատերազմի ռազմավարական նպատակներին առավելագույն արդյունավետությամբ և նվազագույն արժեքով: Նրանց բնորոշ արագությունը, գործողության շառավիղը և ճկունությունը թույլ են տալիս արագ հարվածներ հասցնել հակառակորդի ամենակարևոր թիրախներին: Նման նպատակներին Ջ. Ուորդենը վերագրում է «ծանրության կենտրոնը», որն իր կողմից սահմանվում է որպես «այն կետը, որտեղ հակառակորդն առավել խոցելի է, և այն կետը, որի վրա հարձակումը որոշիչ լինելու լավագույն շանսերն ունի» : Ենթադրվում է, որ այդպիսի կենտրոնները հանդիսանում են ինչպես հակառակորդի ուժի, այնպես էլ խոցելիության աղբյուրներ: Ընդ որում, արշավի պլանավորման ժամանակ օգտագործվում է «ծանրության կենտրոնների» երկակի բնույթը: Ռազմաօդային ուժերի համատարած ներկայությունը տեսականորեն, համեմատած այլ ուժերի հետ, խոցելի է դարձնում հարձակման համար շատ ավելի մեծ թվով ռազմավարական «ծանրության կենտրոններ»:

Հետագայում, Ջ. Ուորդենը, վերլուծելով թշնամուն որպես համակարգ, մշակել է թշնամու ռազմավարական "ծանրության կենտրոնների" դասակարգման մոդել՝ հինգ համակենտրոն օղակների տեսքով (նկ. 1).



Նկ. 1. Ջոն Ուորդենի հակառակորդի ռազմավարական «ծանրության կենտրոնների» դասակարգման մոդելը

Ջ. Ուորդենը պնդում է, որ բոլոր ռազմավարական օբյեկտները կարելի է բաժանել հինգ բաղադրիչ մասերի: Համակարգի ամենակրիտիկական տարրը, ներքին օղակը, ղեկավարությունն է: Կենտրոնում գտնվող ղեկավարությունից զատ, որպես ամբողջության գործելու ունակության տեսանկյունից համակարգի նվազող կարևորությամբ գտնվում են կարևորագույն կազմակերպությունները, ենթակառուցվածքները, բնակչությունն ու զինված ուժերը:

Յուրաքանչյուր օղակի ներսում կա մեկ կամ մի քանի «ծանրության կենտրոններ», որոնք ներկայացնում են օղակի «ուժի և շարժման հանգույցը»: Եթե այն ոչնչացվում կամ չեզոքացվում է, օղակի արդյունավետ գործունեությունը դադարում է, և դրա հետևանքները կազդեն ամբողջ համակարգի վրա (կախված նրանից, թե խոսքը ներքին, թե արտաքին օղակի մասին է): Յուրաքանչյուր օղակի ներսում գտնվող հիմնական հանգույցները ճշգրիտ որոշելու համար Ջ. Ուորդենը առաջարկում է դրանցից յուրաքանչյուրը ևս բաժանել հինգ «ենթաօղակների՝ կառավարման, կարևոր օբյեկտների և այլն, որոնցից յուրաքանչյուրը, անհրաժեշտության դեպքում, նույնպես, կարող են բաժանվել հինգ օղակների, մինչև ստացվի ապագա նպատակների իրական պատկերը:

Հինգ օղակների մոդելի կենտրոնական կողմն այն է, որ ամենաարդյունավետ ռազմավարական պլանը միշտ կենտրոնանում է առաջին հերթին ղեկավարության վրա: Փաստորեն, այս օղակների ներսում գտնվում են որոշակի հոգեբանական «ծանրության կենտրոններ», որոնց պարտությունը կհանգեցնի ֆիզիկական վնասի փոքր մակարդակին, բայց թշնամու հրամանատարությանը կստիպի հասկանալ հետագա դիմադրության անիմաստությունը: Այսպիսով, մինչդեռ ղեկավարության ոչնչացումը կամ չեզոքացումը կհանգեցնի թշնամու հրամանատարական համակարգի լիակատար ֆիզիկական կաթվածահարության, մյուս օղակների ներսում գտնվող «ծանրության կենտրոնների» վրա հաջող հարձակումը կհանգեցնի ղեկավարության վրա հզոր հոգեբանական ճնշման:

Ռազմավարական նպատակաբաշխման այս մոդելը գործնականում հաջողությամբ փորձարկվեց Իրաքի պատերազմներում: Այս փորձարկումից Ջ. Ուորդենը մի քանի դասեր քաղեց, որոնցից ամենակարևորներն էին.

- ռազմավարական հարձակման կարևորությունը և պետությունների փխրունությունը ռազմավարական մակարդակում;

- օդում ռազմավարական և օպերատիվ գերազանցության կորստի ճակատագրական հետևանքները;

- զուգահեռ պատերազմի ճնշող ազդեցությունները (այսինքն՝ ՌԹԲ-ի ամբողջ տարածքում ռազմավարական «ծանրության կենտրոնների» վրա գրեթե միաժամանակյա հարձակումը);

- ուժերի զանգվածային և հանկարծակի հարձակման սկզբունքները վերասահմանելիս տեղեկատվական տեխնոլոգիաների և բարձր ճշգրտության զենքի արժեքը:

Հաջորդ 25 տարիների ընթացքում Ջ.Ուորդենը մշակեց 21-րդ դարում ռազմաօդային ուժերի կիրառման տեսական հիմքը.

- օպերացիան պլանավորելիս անհրաժեշտ է գնահատել այն քաղաքական նպատակները, որոնց իրագործումը նախատեսվում է իրականացնել ռազմական գործողությունների արդյունքում;

- անհրաժեշտ է ընտրել լավագույն ռազմական ստրատեգիա, որը կստիպի հակառակորդին կատարել իրեն պարտադրված կամքը, ինչպես դա որոշվել է քաղաքական նպատակներով և խնդիրներով;

- անհրաժեշտ է օգտագործել «հինգ օղակների» համակարգային վերլուծություն՝ որոշելու համար, թե որ «ծանրության կենտրոնները» կդառնան առաջնային զուգահեռ հարձակման օբյեկտներ:

Նպատակների առումով Ջ. Ուորդենը ընդունում է Կլաուզևիցի մաքսիմալիզմը, ով պնդում էր, որ բոլոր պատերազմներն ընթանում են հանուն քաղաքական նպատակների: Այս տեսանկյունից պատերազմները, ըստ էության, հակամարտություն են յուրաքանչյուր կողմի քաղաքական գործիչների խմբերի միջև: Բոլոր ռազմական գործողությունների նպատակը ոչ թե հակառակորդի զինված ուժերի ոչնչացումն է, այլ հակառակորդի ղեկավարության կամքի մանիպուլյացիան: Ջ. Ուորդենը մանրամասնում է. « պատերազմներն ընթանում են, որպեսզի հակառակորդի ղեկավարությանը համոզենք անել այն, ինչ մենք ուզում ենք, որ նա անի: Այսինքն՝ գնա քաղաքական զիջումների: ... Հակառակորդի ղեկավարությունը համաձայնում է, որ պետք է որոշակի քաղաքական զիջումների գնա, երբ նրա ռազմավարական «ծանրության կենտրոնները» սպառնալիքի կամ անտանելի ճնշման տակ են: ... Այսպիսով, արդյունաբերության կամ ենթակառուցվածքների վրա հարձակումը, առաջին հերթին, չի իրականացվում այն ազդեցության պատճառով, որը կարող է գործադրվել զինված ուժերի վրա, այլ ավելի շուտ ուղղակիորեն ազդում է թշնամու կառավարման համակարգի վրա, ներառյալ ազդեցությունը (ուղղակի կամ անուղղակի) ազգային առաջնորդների և հրամանատարության վրա...»:

Ջ. Ուորդենի տեսությունը կարելի է գրաֆիկորեն պատկերել հետևյալ կերպ (նկ. 2).



Նկ. 2. Ջ.Ուորդենի տեսության գրաֆիկական մեկնաբանում

Զարգացնելով իր տեսությունը Ջ.Ուորդենն առաջարկում է հակառակորդին անհրաժեշտ գործողություններին պարտադրելու երեք հիմնական միջոց.

- հարկադրանքի ռազմավարություն;

- շարքից հանելու ռազմավարություն;

- ամբողջական ոչնչացման ռազմավարություն:

Հարկադրանքի (պարտադրված արժեքի) ռազմավարությունը ենթադրում է, որ դիմադրության շարունակությունը չափազանց թանկ է հակառակորդի հրամանատարության համար: Այս ռազմավարությունը նախատեսում է հակառակորդի անընդունելի վնասի շեմի գնահատում նրա արժեհամակարգի հիման վրա, այնուհետև այդ շեմի գերազանցումն այնքան ինտենսիվ, որքան հնարավոր է՝ նշանակված բազմաթիվ նպատակակետերի միաժամանակյա գրոհի միջոցով: Տեսականորեն, այպիսի գրոհը ստիպում է հակառակորդի ղեկավարությանը ընդունել պարտադրված պայմանները և փոխել իրենց քաղաքականությունը՝ փաստացի հասնելով անընդունելի վնասի մասնակի մակարդակի:

Շարքից հանելու ռազմավարությունը ենթադրում է հակառակորդի հրամանատարության համար անհնար դարձնել դիմադրության շարունակությունը՝ նրա կրիտիկական «ծանրության կենտրոնների» ամբողջական և միաժամանակյա շարքից հանելու հաշվին: Այս դեպքում ձեռք է բերվում համակարգի մասնակի կաթված՝ հակառակորդի համակարգը զգալիորեն նվազեցնում է իր արդյունավետությունը և չի կարողանում իրականացնել իմաստալից դիմադրություն կամ կառավարում:

Ամբողջական ոչնչացման ռազմավարությունը նախատեսում է հակառակորդի ամբողջ համակարգի ոչնչացում: Այս ռազմավարությունը գործնականում հազվադեպ է հանդիպում, դժվար է իրականացնել, հղի է բարոյահոգեբանական խնդիրներով և սովորաբար օգտակար չէ՝ առաջացած չնախատեսված հետևանքների պատճառով: Հաշվի առնելով այս գործոնները՝ Ջ. Ուորդենը մերժում է այս ռազմական ստրատեգիան որպես քաղաքականապես ոչ կենսունակ ՝ 21-րդ դարի պատերազմում կիրառելու համար ։

Ազդեցության նպատակակետերը ընտրելիս Ջ.Ուորդենն առաջարկում է յուրաքանչյուր ռազմավարական օղակի դեկոմպոզիացում և վերլուծություն, մինչև չհայտնաբերվի այն «ծանրության կենտրոնը» հանդիսացող բաղադրիչը, որի խոցումը կապահովի հակառակորդի ամբողջ համակարգի մասնակի կամ ամբողջական կաթվածը: Նրա առաջարկած հաջորդական դեկոմպոզիացիան հակառակորդի համակարգի դիտարկման խորության մեծացմամբ թույլ է տալիս բացահայտել համակարգի տարրերի փոխկախվածությունն ու «համահունչությունը»: Արդյունքում, համակարգի ամբողջական վերլուծությունը կարող է բացել «ծանրության կենտրոնները», որոնք կապեր ունեն ինչպես շրջանակների, այնպես էլ շրջանակների ներսում գտնվող բաղադրիչների հետ:

Այսպիսով, Ջ.Ուորդենի տեսությունը նշում է, որ արդյունավետ ռազմավարությունը հակառակորդի համապարփակ ուսումնասիրության արդյունք է՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական, ռազմական և սոցիալ-մշակութային գործոնները: Բացի այդ, չնայած հինգ օղակների հիմնական մոդելը կարող է շատ պարզեցված լինել, «առաջին կարգի» վերլուծությունը, օղակների տարրերի հաջող բաժանումը, կբացահայտի օղակների ներսում և դրանց միջև դինամիկ փոխհարաբերությունները, որոնք եզակի են և կարևոր են դիտարկվող կոնկրետ հասարակու-

թյան կամ մշակույթի համար: Այսպիսով, «հինգ օղակների» ստանդարտ մոդելը մեկնարկային կետ է հետագա ավելի խորը վերլուծության համար՝ հակառակորդի ամենակարևոր «ծանրության կենտրոնները» որոշելու խնդիրը լուծելու համար:

Ջ.Ուորդենի տեսության հիման վրա հակառակորդի համակարգը դեկոմպոզիցիացնելիս և վերլուծելիս պետք է ուշադրություն դարձնել հետևյալ երեք գործոններին:

Նախ, նույնիսկ եթե հակառակորդի համակարգի վերլուծությունը ճիշտ է, տեսության հիմնական կանոնը՝ համակարգի ղեկավարությունը, որպես թիրախի առաջնային ընտրություն, պարտադիր չէ, որ ճիշտ լինի: Ղեկավարությունը միշտ չէ, որ ամենակարևոր թիրախն է: Այլ օղակները (կամ դրանց միջև կապերը) կարող են և հաճախ պարունակում են շատ ավելի կարևոր «ծանրության կենտրոններ»: Ջ.Ուորդենի տեսությունը չի հերքում դա, բայց նշում է, որ շատ դեպքերում արտաքին օղակների թիրախները պետք է ընտրվեն այնպես, որ ազդեն համակարգի ղեկավարության համար հատուկ «ծախս-օգուտ» ցուցանիշի հաշվարկի վրա, քանի որ հենց դա է որոշում փոփոխվող քաղաքական ուղղությունը:

Երկրորդ, Ջ.Ուորդենի տեսությունը հնարավորություն է տալիս հասկանալու տեղեկատվական-հոգեբանական, տնտեսական և այլ ոչ մահացու ազդեցությունների պոտենցիալ դերը թշնամու ղեկավարության վրա՝ որպես ընդհանուր գործողության մաս: Այն ցույց է տալիս, որ թշնամու համակարգի պարտությունը կարող է իրականացվել բացառապես համակարգի ղեկավարների վրա տեղեկատվական-հոգեբանական ազդեցության միջոցով՝ սեփական արժեքային համակարգի պարտադրմամբ կամ դիմադրելու կամքի նվազմամբ:

Երրորդ, Ջ.Ուորդենի տեսությունը վերաբերում է պասիվ հակառակորդի դեմ ձեռնարկված միակողմանի գործողությանը: Այսպիսով, անտեսվում են «գործողություն-արձագանք» ցիկլերը և համակարգերի կոնֆլիկտային փոխազդեցության ուղեկցող գործոնները: Միևնույն ժամանակ, Ջ.Ուորդենը պնդում է, որ եթե հարձակվող կողմն ունի միտումնավոր ավելի արագ կառավարման ցիկլ՝ «դիտարկել - կողմնորոշվել - որոշել - գործել», ապա դա իրականում բացառում է հակառակորդի արձագանքի հնարավորությունը վերահսկողության ռազմավարական մակարդակում:

Ներկայումս Ջոն Ուորդենի տեսությունը լայնորեն կիրառվում է ռազմական գործողությունների պլանավորման ժամանակ ռազմավարական նպատակների ընտրության հարցում: Ուորդենի օղակները տեղ են գտել արևմտյան մի շարք պետությունների զինված ուժերի ռազմական փաստաթղթերում, իսկ մշակված տեսությունը, Բոյդի ցիկլերի տեսության հետ միասին, հիմք են հանդիսանում ցանցակենտրոն պատերազմի հայեցակարգի համար:

Աղբյուրը. Warden J. A. The Air Campaign: Planning for Combat. – National Defense University Press Publication, 1988.